ԹԵՐԹՕՆ

—

Նամակ Խմբագրին

Տէր Հայր Ջան·

Սուրբ յաջիդ մատաղ. հրամանքիդ կշտին համ քիչմ գործ ունիմ, համ էլ խոստովանանք։

Ես կուզիմ օր ատաից յետև դուն յըլլիս իմ ծխատէր խոստովանահայրը. ես ալ գլլիմ հրամանքիդ ծուխը։ Ես աղքատ մարդ իմ, դուզը կըսիմ, դուն առանց փարի մեզի համար տէրտէրութիւն կենիս. ես ալ առանց փարի հրամանքիդ ամենը կը ղալայիմ։ Քիչմ ինձի ղադը գլլի հմայ, զարար չունի. մեր հոգևոր հայրն իս, մեզի կօրշնիս։ Հիմի հրամանքիդ յայտնիմ թէ ես վեվ իմ. ես Գիւմրեցի Ղալայչի Մարգարն իմ. մէկ վախտմ դաղեթաճի Պետրոս աղայի կշտին բանւոր էի, խելճ մարդը կոտը ընկաւ, խանութը կոխպեց, ինձի ալ դուլները թողեց։ Հիմի կուզիմ օր հրամանքիդ կշտին բանւոր մտնիմ։ Թէ օր կուզիս, խնդրեմ ապանը տալիս, օր ես ալ հաճաթ մաճաթ սարգիմ բաշլայիմ ղալայելու ժանկոտ ամենը. չիս ուզի, մի տալի. ես ալ ղալայչութենի թարկը կուտամ, ուրիշ սանիաթմ կսարգիմ։

Հրամանքիդ խ. ծ.

ՂԱԼԱՅՉԻ ՄԱՐԳԱՐ